

դասակարգին, որուն համար թուրքերը յատուկ արգահատանք կը տածեն:

Այսպէս, «ըստ ամենայնի» զայն հանդերձելէ, ոգեւորելէ, գօտեպնդելէ յետոյ, առանց «Տէր ուղղեցի», լուսդէմ մը դրաւ զինքը ճամբու, անոր ընկեր տալով հրակայակազմ երիտասարդ մը, կատարելապէս հեթանոս՝ տարագէն, ինչպէս լեզուէն, արհեստով մսավաճառ, որ, ամէն տարի, Բարձր Հայքի շրջանը կ'այցելէր մսացու արջառ գնելու: Ճնճղուկի չափ բան էր ընկեր Մաթիկը այդ հսկային քովն ի վեր: Կիլիկիոյ դաշտին մէջ մարդկային տունկը մօտէն կը նմանի բուսական տեսակներուն: Արգասաբեր հողը ու Տաւրոսեան ջուրը, միացած միջերկրականեան արեւին՝ մարմինը կ'ընեն լայն ու օծուն, քիչիկ մը դէպի թուխը զարնող: Բայց միսի յորդութեամբ մը, փարթամութեամբ մը, որ կը տպաւորէ: Քառասունէն ետքը այդ մարմինները կը տկուին: Բայց անկէ առաջ մեր փալապ^(*) Կարպիսին նման հոյակապ նմոյշներ են բուսական կատարելութեան: Անոնք կը կրեն նոյնքան արի սիրտ մըն ալ ու կը սիրեն իրենց ազգը, կըօնքը՝ անհաւատալի սաստկութեամբ, մեռնելով հաւատքի «ուղուրին», բայց վարուելով հեթանոսին հետ չքեղ արձակութեամբ մը: Քաջարի, ուղիղ տղաք, տէր իրենց կիրքերուն, ինչպէս բարբառին: Մոլեռա՞նդ, բայց աղանդաւոր ըսուելու աստիճան:

Տարագրութենէն յետոյ, Սուրիա, ես հանդիպեցայ անոնցմէ նմոյշներու, որոնք քալած ատեն քարերը կը դողացնէին սալարկին, բայց գառնուկի պէս հեզ, կը պատմէին իրենց տեսիլքները, այնքան իրաւ, յստակ, ճշգրիտ, որ մարդ կ'ապշէր տեսարանէն, հին դարերու հոգետեսներուն խլեակները անկարող ըլլալով հաշտեցնելու մարմնեղէն սա յորդումին: Մսավաճառ Կարպիսը (կը ծածկէր

(*) Հալապ.–ամասուկները գնող ու ծախող: